ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում 2011 թվականի ընթացքում գործունեություն է իրականացրել ելնելով բնագավառի հեռանկարային զարգացման ծրագրերով, ՀՀ Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, ՀՀ կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագրով և գերակա խնդիրներով, նախարարության աշխատանքային ծրագրով, ինչպես նաև հանրապետության 2011 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման այլ ծրագրերով և տարբեր հանձնարարականներով նախանշված հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից:

Ստորև ներկայացվում է հիմնախնդիրների լուծման ուղղությամբ կատարված հիմնական աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 111-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի՝

1) Կետ 56. <<Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը>>:

<Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայից բխող Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը> հաստատվել է ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 308-Ն որոշմամբ:

ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 308-Ն որոշման հավելվածի՝

ա. 1-ին կետի համաձայն՝ ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 17-ի նիստի N 45 արձանագրային որոշման 16-րդ կետով հավանության է արժանացել <Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթները>,

բ. 2-րդ կետի շրջանակներում առաջարկություններ են ներկայացվել քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացներում լանդշաֆտային հիմնախնդիրների ներառման վերաբերյալ, որոնք ընդունվել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 12-ի <Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հուլիսի 31-ի N 657-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին> N 952-Ա որոշմամբ,

գ. 3-րդ կետի համաձայն՝ 2011 թվականի դեկտեմբերի 19-ի N 01/11.1/6409-11 գրությամբ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել <Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակ սահմանելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագիծը,

դ. 8-րդ կետի համաձայն՝ կազմվել է Հայաստանի Հանրապետությունում Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի իրականացման վերաբերյալ 2011 թվականի զեկույցը, որը տեղադրվել է նախարարության պաշտոնական կայքում:

2) Կետ 57. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը>>:

<Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի N 678-Ն որոշմամբ:

Իրավական ակտի գործողությունը նպատակաուղղված է հատուկ կարգավորման ենթակա տարածքներում ՀՀ համայնքների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության, միասնական պահանջների և չափորոշիչների սահմանման, ինչպես նաև քաղաքաշինական փաստաթղթերի համաձայնեցման գործառույթների օպտիմալացմանը և դրանց իրագործման ժամկետների կրճատմանը:

3) Կետ 58. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը>:

ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններն ու լրացումները կատարվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի <Հայաստանի Հանրապետությունում շինարարության օբյեկտների կառուցապատման ընթացակարգերը կանոնակարգելու և մի շարք իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 257-Ն որոշման 9-րդ կետով:

Իրավական ակտով ամրագրվել են պահանջներ, ուղղված՝ ավարտված շինարարության շահագործման փաստագրման ընթացակարգի ժամկետների կրճատմանը և փոստային բաժանորդային պահարանների պարտադիր տեղադրմանը:

4) Կետ 59. <<Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) հանգստի, զբոսաշրջության և առողջարանային կենտրոնների կազմակերպման նպատակով առանձնացված տարածքներում քաղաքաշինական գործընթացների իրականացման կանոնակարգը հաստատելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը>>:

2011 թվականի դեկտեմբերի 28-ի N 01/15.1/6610-11 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել՝ <Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային կենտրոններում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 13-ի N 111-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը:

Իրավական ակտի նախագիծը նպատակաուղղված է ՀՀ համայնքներում (բնակավայրերում) առողջարանային և զբոսաշրջության կենտրոնների ու բնակչության հանգստի վայրերի ստեղծման համար առանձնացվող տարածքներում քաղաքաշինական գործունեության միասնական սկզբունքների և չափորոշիչների սահմանմանը:

5) Կետ 60 <<Քաղաքաշինության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը>>:

2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 01/25.1/6352-11 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել՝ <Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում

լրացում և փոփոխություններ կատարելու մասին> ՀՀ օրենքի նախագծի և դրա ընդունմամբ պայմանավորված՝ <Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին>, ինչպես նաև <Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին> և <Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին> ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը:

Օրենքներում փոփոխությունները և լրացումները նպատակաուղղված են ինքնակամ շինարարության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 111-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

3. 2011 թվականի գերակա խնդիրների ցանկի՝

1) Կետ 34. <Բնակարանային ապահովում՝ աղետի գոտու բնակավայրերում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման միջոցով>:

Գերակա խնդրի 2011 թվականին պետական աջակցությամբ իրականացող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում շարունակվել են երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պարտավորությունների կատարմանն ուղղված՝ դեռևս 2009 թվականին սկիզբ առած, շինարարական աշխատանքները: Մասնավորապես. նշված ծրագրի շահառու հանդիսացող ընտանիքների բնակապահովման նպատակով ընթացք են ստացել 2413 բնակարանների (բնակելի տների) շինարարական աշխատանքները, որոնցից՝

ա. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 և Անի թաղամասերում՝ 1756 բնակարաններից բաղկացած 38 բազմաբնակարան շենքերի, որոնց շինարարական աշխատանքները հիմնականում ավարտված են, սակայն, հաշվի առնելով, որ կառուցվող շենքերի ջրամատակարարման, ջրահեռացման, գազաֆիկացման աշխատանքներից բացի անհրաժեշտություն է առաջացել իրականացնել նաև ներթաղամասային ջրամատակարարման, ջրահեռացման ցանցի կառուցման, ինչպես նաև գազաֆիկացման և տարածքի բարեկարգման հետ կապված աշխատանքներ, նշված շենքերը նախատեսվում է շահագործման հանձնել 2012 թվականի մայիսին,

բ. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում՝ 104 բնակարաններից բաղկացած 3 բազմաբնակարան շենքերի,

գ. ՀՀ Լոռու մարզի 24 գյուղական համայնքներում՝ 571 բնակելի տների, որոնցից 168 բնակելի տների շինարարական աշխատանքներն արդեն իսկ ավարտված են:

Հաշվի առնելով, որ Գյումրի քաղաքում հաշվառված բնակարանային շինարարության ծրագրի շահառու հանդիսացող 389 ընտանիքներ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 1329-Ն որոշմամբ սահմանված վերջնաժամկետում (2011 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ) չեն ներկայացել և չեն ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը, ծրագրի շրջանակներում կառուցվող բնակարանների (բնակելի տների) բաշխումն ապահովելու նպատակով 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ ուսումնասիրվել են սահմանված կարգով հաշվառված 3434 ընտանիքների փաստաթղթային փաթեթները, որոնց ուսումնասիրությունների արդյունքներով 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ՝

ա. 1414 փաթեթներ ենթակա են համալրման անհրաժեշտ փաստաթղթերով,

բ. 2020-ը համալրված են անհրաժեշտ փաստաթղթերով և 2011 թվականի ընթացքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի 25 արտագնա նիստերում կայացած քննարկումների արդյունքներով 94 ընտանիքների (կամ համալրված փաթեթ ունեցող ընտանիքների 4.6%) բնակապահովման հարցը հետաձգվել է՝ հանրապետությունից ամբողջ կազմով բացակայելու պատճառով, 331 ընտանիքներ (կամ համալրված փաթեթ ունեցող ընտանիքների 16.4%) չեն ճանաչվել ծրագրի շահառու՝ հիմնականում նախորդ տարիներին բնակարանային պայմանները բարելավելու կամ երկրաշարժի հետևանքով վնասված բնակելի տունը քանդված (քանդման ենթակա) չլինելու կամ երկրաշարժի պահին տուն ունենալու փաստը հիմնավորված չլինելու հիմքերով կամ մահվան կապակցությամբ, 1595 ընտանիքներ (կամ համալրված փաթեթ ունեցող ընտանիքների 79.0%) ճանաչվել են ծրագրի շահառու, որոնցից 4-սենյականոց բնակարան ստանալու հավակնող 109 ընտանիքներ մասնակցել են Մուշ թաղամասի 8 բազմաբնակարան շենքերի 4-սենյականոց 124 բնակարանների բաշխման նպատակով 2011 թվականի դեկտեմբերի 27-ին անցկացված վիճակահանությանը:

Շարունակվել է Գյումրի քաղաքի <Մուշ-2> թաղամասում 2010 թվականին կառուցված բազմաբնակարան շենքերից բնակարան ստացած անձանց կողմից ժամանակավոր կացարանների ազատման և դրանց ապամոնտաժման գործընթացը (2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ 575 ժամանակավոր կացարաններ արդեն իսկ քանդվել են), ինչպես նաև 2010 թվականին իրականացված բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բազմաբնակարան շենքերից բնակարաններ ստացած ընտանիքներին հատկացված բնակարանների նվիրատվության (անհատույց մասնավորեցման) պայմանագրերի կնքման գործընթացը (2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ կնքվել են 624 պայմանագրեր):

2) Կետ 35 <Քաղաքաշինության գործունեության հատուկ կարգավորման բնագավառի օրենսդրության կատարելագործում և ՀՀ բնակավայրերում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորում>:

Գերակա խնդրի շրջանակներում՝

ա. ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի N 678-Ն որոշմամբ հաստատվել է <Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը նպատակաուղղված է հատուկ կարգավորման ենթակա տարածքներում ՀՀ համայնքների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության, միասնական պահանջների և չափորոշիչների սահմանման, ինչպես նաև քաղաքաշինական փաստաթղթերի համաձայնեցման գործառույթների օպտիմալացմանը և դրանց իրագործման ժամկետների կրճատմանը:

բ. 2011 թվականի նոյեմբերի 9-ի N 01/15.2/5220-11 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել <Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 728-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է Գյումրի քաղաքի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտուց հանել այն տարածքները, որտեղ քաղաքաշինական փաստաթղթերով կանոնակարգված են քաղաքաշինական միջավայրի կազմակերպման և կառուցապատման խնդիրները:

3) Կետ 36. <Հայաստանի Հանրապետությունում տարածական պլանավորման համակարգի բարեփոխում, քաղաքաշինության ոլորտում համայնքների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում>:

Գերակա խնդրի շրջանակներում 2011 թվականին ընդունվել են՝

ա. ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ <<Քաղաքաշինության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>, <<Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>, <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին>, <<Պետական տուրքի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> ՀՕ-226, ՀՕ-227, ՀՕ-228, ՀՕ-229, ՀՕ-230, ՀՕ-231 օրենքները,

բ. ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի <Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագիծը հաստատելու մասին» N 177-Ն որոշումը,

գ. ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի <Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Աղբերքի գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին> N 603-Ն որոշումը,

դ. ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի «ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատելու մասին» N 1064-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի նիստերում քննարկվել են Արարատի մարզի Մասիս քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի մշակման /լրամշակման/, ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր, Նոր Գեղի գյուղական համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Գ-1, Գ-Կենտրոն, Գ-2 և Գ-3 թաղամասերին հարող հողերի 4.1 հա հատվածի, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի կամրջին հարող 5.6 հա տարածքի գոտիավորման նախագծերի մշակման առաջադրանքները, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատագծի նախագիծը, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1597-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը:

Նախարարության համաձայնեցմանն են ներկայացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Բերդկունք, Շորժա, Նորատուս, Գեղարքունիք, Հայրավանք, Կարմիրգյուղ, Վարդենիկ, Վաղաշեն, Ջիլ համայնքների և Կոտայքի մարզի Զառ համայնքի պարզեցված գլխավոր հատակագծերը, ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավան և Կապուտան համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի մշակման I փուլի, ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք, Վայոց Ձորի մարզի Ազատեկ,Գլաձոր, Ելփին համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի առաջադրանքների կազմման և լրամշակման աշխատանքները:

Նախարարության և շահագրգիռ մարմինների համաձայնեցման փուլում են ՀՀ Կոտայքի մարզի Կապուտան, Ձորաղբյուր և Քանաքեռավան համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերը:

ե. 2011 թվականի դեկտեմբերի 27-ի N 01/11.1/6550-11 գրությամբ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել <Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու Հայաստանի Հանրապետության

կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը,

զ. 2011 թվականի դեկտեմբերի 28-ի N 01/11.1/6558-11 գրությամբ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել <Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը:

4) Կետ 37. <ՀՀ տարածքում ինքնակամ շինարարության հիմնախնդիրների լուծման միջոցառումների իրագործում>:

Գերակա խնդրի շրջանակներում՝

ա. պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքների վրա ինքնակամ շինարարության օրինականցման գործընթացի ժամկետի սահմանափակման նպատակով մշակվել և 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 01/25.1/6207-11 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել <Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագիծը,

բ. վերահսկող կազմակերպություններին ֆինանսական խրախուսման միջոցների և մեխանիզմների կիրառումն ապահովելու համար, պետական վերահսկողության իրականացման արդյունավետության բարձրացման և ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով, 2011 թվականի մարտի 23-ի թիվ 01/25.1/1087-11 գրությամբ համապատասխան առաջարկություններ են ներկայացվել տեսչական բարեփոխումները համակարգող խորհրդին:

5) Կետ 38. <Քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կանոնակարգում>:

Գերակա խնդրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

ա. <Հայաստանի Հանրապետության համայնքներում քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կանոնակարգման հայեցակարգին և համակարգի ներդրման ուղղություններից բխող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին> որոշման նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 3-ի N 43 արձանագրային որոշմամբ:

բ. մշակվել և 2011 թվականի դեկտեմբերի 28-ի N 01/15.1/6604-11 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել՝ <Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 3-ի նիստի N 43 արձանագրային որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը նպատակաուղղված է ներկայումս գործողության մեջ դրված թվով 3 բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կիրառման ընթացակարգերում միասնական մոտեցումների ապահովմանը,

գ. մշակվել և 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 01/15.1/6639-11 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել՝ <Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) բնակելի կառուցապատման օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգների ներդրման ու կիրառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1136-Ն ու 2010 թվականի ապրիլի 15-ի N 440-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

6) Կետ 39. <<Համաշխարհային բանկի խմբի <Գործարարությամբ զբաղվելը> (Doing Business) վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի էական բարելավում>>:

Գերակա խնդրի շրջանակներում՝

ա. ընդունվել է ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի <Հայաստանի Հանրապետության շինարարության օբյեկտների կառուցապատման ընթացակարգերը կանոնակարգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 257-Ն որոշումը, վերանայվել են՝ ՀՀ կառավարության 29.08.2002թ. N 1473-Ն, 21.12.1998թ. N 812, 06.05.2010թ. N 711-Ն, 28.10.98թ. N 660, 02.02.2002թ. N 91, 08.05.03թ. N 626-Ն որոշումներով սահմանված կարգերը, ինչի շնորհիվ էապես նվազեցվել է կառուցապատման ընթացակարգերի քայլերը, տևողությունն ու արժեքը,

բ. ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 1768-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի» 4.5 կետի շրջանակներում ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից մշակվել է «Կառուցապատողի ուղեցույց» ձեռնարկը, որի էլեկտրոնային տարբերակը տեղադրվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության էլեկտրոնային կայքում: Ուղեցույցի համառոտ տարբերակը հրատարակվել է բուկլետի տեսքով և ավելի քան 320 օրինակ տրամադրվել է շահագրգիռ գերատեսչություններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին:

2011 թվականին կատարված բարեփոխումների արդյունքում Հայաստանը բարելավել է իր վարկանիշային ցուցանիշը 2012 թվականի <Գործարարությամբ զբաղվելը> գնահատման սանդղակում 38 տեղով, շինարարական թույլտվություններ բաղադրիչով՝ 183 երկրների շարքում զբաղեցնելով 57-րդ հորիզոնականը:

գ. ՀՀ կառավարության կողմից ընդունվել են՝ 2011 թվականի մայիսի 20-ի <Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին> N 679-Ն և 2011 թվականի հունիսի 30-ի <Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշման մեջ լրացում կատարելու մասին> N 889-Ն որոշումները, որոնք նույնպես նպատակաուղղված են կառուցապատման ընթացակարգերի կանոնակարգմանը:

IV. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ, ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ԵՎ ՏԱՐԲԵՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐՈՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ

1. ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

4. Քաղաքաշինական գործառույթներին վերաբերող օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով հաշվետու ժամանակահատվածում ընդունվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի <Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> N 1541–Ն որոշումը, որով հստակեցվել են ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեբերի 21-ի «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին» N 812 որոշմամբ սահմանված հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը:

5. 2011 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել ՀՀ կառավարության որոշումների 3 նախագծեր:

6. ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին հարող տարածքներում առևտրի և սպասարկման օբյեկտների նախագծային լուծումների կատալոգի ներդրման մասին» N 1658-Ն որոշման 2-րդ կետի հանձնարարականի համաձայն կազմակերպվել է կատալոգի գեղարվեստական ձևավորման և 500 օրինակի տպագրման գործընթացը: Կատալոգը տրամադրվել է ՀՀ մարզպետարաններին և ԼՂՀ քաղաքաշինության նախարարությանը:

7. Ի կատարումն ՀՀ վարչապետի մոտ 2011 թվականի հոկտեմբերի 14-ին կայացած նիստի N 23.4/[92141]-11 արձանագրության հանձնարարականի՝ Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի «Իրազեկվածության ապահովում» բաժնի 10.9-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով, նախարարության կողմից կազմակերպվել է ՀՀ բնակավայրերում անհատական բնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով իրականացվող շինարարության գործընթացի տեղեկատվության վերաբերյալ պաստառների տպագրումը: Պաստառները տրամադրվել են ՀՀ մարզպետներին՝ մարզպետարանների և համայնքների վարչական շենքերի տեսանելի մասերում փակցնելու համար:

8. ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 848-Ն որոշմամբ հաստատված <Տաթև> վանական համալիրը և հարակից գյուղական համայնքները զբոսաշրջության կենտրոն հայտարարելու ծրագրի իրականացման շրջանակներում ՀՀ վարչապետի 2011 թվականի ապրիլի 5-ի N 285-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովը և 2011 թվականի նոյեմբերի 16-ի N 1076-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբը տեղում ուսումնասիրել են <Տաթև> վանական համալիրի շուրջ տիրող իրավիճակը, վերլուծել առկա քաղաքաշինական իրադրությունը և գոյություն ունեցող խնդիրների ու դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունները ՀՀ վարչապետին են ներկայացրել 2011 թվականի մայիսի 4-ի N 01/15.1/1890-11 և դեկտեմբերի 16-ի N 01/15.2/6374-11 գրություններով:

2. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՈԼՈՐՏ

9. 2011 թվականի ընթացքում նախարարի անմիջական հսկողության ներքո գտնվող ծրագրերի շրջանակներում մասնակցություն է ցուցաբերվել <Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացում> ՄԱԿ-ի ԳԷՖ ծրագրի իրականացմանը: Ծրագրի առաջին փուլի շրջանակներում ավարտվել է բնագավառի օրենսդրական և նորմատիվային դաշտի վերլուծությունը և մշակվել են առաջարկություններ այդ ուղղությամբ մոտակա երեք տարիներին կատարվելիք աշխատանքների վերաբերյալ:

2011 թվականին ՀՀ քաղաքաշինության նախարարության, «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի միջև ստորագրվել է համագործակցության նամակ հուշագիր՝ ծրագրի միջոցների ներգրավմամբ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով իրականացվող բնակարանաշինության ծրագրի շրջանակներում Ախուրյան համայնքում կառուցվելիք բազմաբնակարան շենքերից մեկը էներգետիկ արդյունավետության բարձր ցուցանիշներով կառուցելու նպատակով:

10. ՀՀ Նախագահի 2009 թվականի մայիսի 6-ի «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N ՆԿ-68-Ա կարգադրությամբ հաստատված սահմանված ժամկետներում ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել վերոհիշյալ

ծրագրի 2009-2011 թվականների միջոցառումների ցանկի 119/Ե/2 և 149/Ե/32 կետերով ՀՀ քաղաքաշինության նախարարության մասով նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ եռամսյակային տեղեկատվությունը ընդ որում.

1) ցանկի 119/Ե/2 կետով ընդգրկված՝ «Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման բնագավառի բարելավմանն ուղղված տեղեկատվական (հաշվառման) համակարգի՝ բնակարանային ռեեստրի ստեղծում» միջոցառումն ընդգրկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N 38 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման և շահագործման բարելավման հնգամյա ռազմավարական ծրագրի միջոցառումների ցանկում:

2) ցանկի 149/Ե/32 կետով ընդգրկված՝ «Թափոնների կազմակերպված հեռացման տեղերի և վտանգավոր թափոնների թաղման մասնագիտացված պոլիգոնների ստեղծում» միջոցառման կատարման ուղղությամբ 2011 թվականին իրականացվել են.

ա. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) աջակցությամբ իրականացվող <ՀՀ Կոտայքի մարզում տարածաշրջանային աղբավայրի ստեղծում> ծրագրի շրջանակներում ՎԶԵԲ-ի հետ համատեղ քննարկումների արդյունքում լրամշակվել է ՎԶԵԲ-ի և Հայաստանի Հանարապետության՝ ի դեմս ՀՀ քաղաքաշինության նախարարության միջև դրամաշնորհային համաձայնագրի նախագիծը, որը կնքվել է 2011 թվականի փետրվարի 2-ին: ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ համատեղ սահմանված կարգով նախապատրաստվել է նշված համաձայնագրի փաթեթը, որը վավերացվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2011 թվականի փետրվարի 21-ին թիվ ՆՀ-33-Ն հրամանագրով:

Նշված դրամաշնորհային համաձայնագրի հիման վրա 2011 թվականի մարտի 10-ին COWI A/S դանիական խորհրդատվական ընկերության հետ կնքվել է «Կոտայքի կոշտ թափոնների կառավարում. շրջակա միջավայրի և սոցիալական ուսումնասիրություն» խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիրը:

Ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով նախարարության կողմից պարբերաբար կազմակերպվել են աշխատանքային խորհրդակցություններ շահագրգիռ մարմինների մասնակցությամբ՝ նվիրված COWI A/S դանիական խորհրդատվական ընկերության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքներով մշակված առաջարկությունների քննարկմանը:

COWI A/S դանիական խորհրդատվական ընկերության կողմից 2011 թվականի օգոստոս ամսին ներկայացվել է ծրագրի ավարտական հաշվետվությունը, որն էլ տեղադրվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության պաշտոնական կայքում:

բ. ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի նիստի N 22 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել <Սևանա լճի ավազանում աղբավայրերի տեղաբաշխման գլխավոր ուրվագիծը>:

11. Մշակվել են թվով 14 իրավական ակտերի նախագծեր, որոնցից 11-ը ընդունվել են ՀՀ կառավարության կողմից:

3. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

12. ՀՀ ՔՆ <Քաղաքաշինական ԾԻԳ> ՊՀ պատվիրատվությամբ վերահսկվել և իրագործվել են ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված շուրջ 34.9 մլրդ դրամի ծախսային ծրագրեր՝ որից.

<Կրթական օբյեկտների հիմնանորոգում> ծախսային ծրագրի ներքո՝ շուրջ 4, 172 700.0 հազ. դրամի՝ 76 օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներ՝ 24-ը ք.Երևանում և 52-ը ՀՀ մարզերում:

<Կրթական օբյեկտների շինարարություն> ծախսային ծրագրի ներքո՝ շուրջ 1,848 000.0 հազ. դրամի ՀՀ մարզերում գտնվող 16 օբյեկտների կառուցման աշխատանքներ:

<Ավագ դպրոցների հիմնանորոգում> ծախսային ծրագրի ներքո՝ շուրջ 1,196 000.0 հազ. դրամի 18 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքներ՝ 6-ը ք.Երևանում և 12-ը ՀՀ մարզերում:

<Միջին մասնագիտական կրթության օբյեկտների հիմնանորոգում> ծախսային ծրագրի ներքո ՝ շուրջ 86, 000.0 հազ. դրամի 3 օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներ՝ 1-ը ք.Երևանում և 2-ը ՀՀ մարզերում:

<Հատուկ կրթական օբյեկտների հիմնանորոգում> ծախսային ծրագրի ներքո շուրջ 257, 233.0 հազ. դրամի Երևանի թվով 3 հատուկ դպրոցների հիմնանորոգման աշխատանքներ:

<Մշակութային օբյեկտների հիմնանորոգում> ծախսային ծրագրի ներքո՝ 21 մշակութային օբյեկտների շուրջ 938 200.7 հազ.դրամի հիմնանորոգման աշխատանքներ՝ 4-ը Երևանում և 17-ը ՀՀ մարզերում:

<Մշակութային օբյեկտների շինարարություն> ծախսային ծրագրի ներքո՝ շուրջ 124, 619.3 հազ. դրամի ՀՀ մարզերի թվով **2** օբյեկտների կառուցման աշխատանքներ:

<***Մարզական օբյեկտների հիմնանորոգում*** > ***ծախսային ծրագրի ներքո՝*** շուրջ 60 000.0 հազ. դրամի «Տորք Անգեղ» մարզական միության շենքի հիմնանորոգման աշխատանքներ:

<Մարզական օբյեկտների շինարարություն> ծախսային ծրագրի ներքո՝ *շուրջ* 190 000.0 հազ. դրամի ՀՀ մարզերի թվով 3 մարզադպրոցների և 1 մարզադաշտի կառուցման աշխատանքներ:

<Բնակարանային շինարարություն> ծախսային ծրագրի ներքո՝ 25 972 081.1 հազ. դրամի շրջանակներում իրականացվում և շարունակում են շահագործման հանձնվել ՀՀ մարզերի բնակելի շինարարության օբյեկտներ:

<Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն> ծախսային ծրագրի ներքո՝ 220,000.0 հազ.դրամի շրջանակներում ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի թիվ 5 բազմաբնակարան շենքի վերականգնման և ՀՀ Շիրակի մարզի ք. Մարալիկի թվով 9 կիսակառույց բ/շ ավարտման աշխատանքներ:

<Շենքերի և շինությունների ձեռքբերում> ծախսային ծրագրի ներքո 20 000.0 մլն.դրամի շրջանակներում ձեռք է բերվել ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապի համայնքային կենտրոնը:

Միաժամանակ, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին իրականացվել են շուրջ 2.8 մլրդ դրամի պատվիրված գործընթացներ՝ ՀՀ տարածաշրջանային պետական քոլեջների, ավագ և հանրակրթական միջնակարգ դպրոցների, մի շարք վարչական օբյեկտների աշխատատարածքների, հանրակացարանային բնակելի տարածքների հիմնանորոգման, վերակառուցման ու վերանորոգման աշխատանքներ:

Բյուջետային տարում նախատեսված և ՀՀ Նախագահի հսկողությամբ իրականացվող թվով 28 օբյեկտների շուրջ 2.2 մլրդ դրամի հիմնանորոգման և կառուցման աշխատանքներն ավարտվել են: 28-ից 23 օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված մնացորդային աշխատանքների ավարտը նախատեսվում է 2012 թվականի ընթացքում:

4. ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏ

13. 1992 թվականի մարտի 13-ին՝ <Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին> և 1994 թվականի սեպտեմբերի 9-ին՝ <Շինարարական գործունեությունում համագործակցության մասին> Մոսկվայում ստորագրված համաձայնագրերի շրջանակներում, անդամակցելով ԱՊՀ անդամ երկրների Շինարարությունում տեխնիկական նորմավորման, ստանդարտացման և համապատասխանության գնահատման միջպետական գիտատեխնիկական հանձնաժողովին (ՄՆՏԿՍ), հանձնաժողովի 2011 թվականի աշխատանքային պլանի համաձայն, իրականացվել են 1 միջպետական շինարարական նորմերի, 71 միջպետական ստանդարտների, 1 տեխնիկական կանոնակարգի /ԵվրԱզԷՍ/ նախագծերի փորձաքննության և 22 միջպետական ստանդարտների ընդունման և գործարկման ժամկետը սահմանելու գործընթացները: Միջպետական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման գործընթացին մասնակցությունը հնարավորություն է տալիս համալրելու Հայաստանի Հանրապետության նորմատիվատեխնիկական փաստաթղթերի բազան, այն աստիճանաբար մոտարկելով միջազգային և եվրոպական չափանիշներին:

Մասնակցություն է ցուցաբերվել է ԱՊՀ շրջանակներում շինարարության բնագավառի միջպետական տեխնիկական նորմավորման և ստանդարտացման 2012 թվականի աշխատանքային պլանի կազման աշխատանքներին:

14. Բնագավառի սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրման միջգերատեսչական խորհրդի աշխատանքների շրջանակներում մասնակցություն է ցուցաբերվել ոլորտի 3 փորձարկման լաբորատորիաների ձևավորման, դրանց հավատարմագրման, տեղում գնահատման աշխատանքներին:

15. Կազմակերպվել, մշակվել և ՀՀ արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննությանն ու պետական գրանցմանն են ներկայացվել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2011 թվականի սեպտեմբերի 26-ի հրամանով հաստատված <ՀՀՇՆ II-7.01-2011 <Շինարարական կլիմայաբանություն> շինարարական նորմերը և 2011 թվականի հուլիսի 27-ի հրամանով հաստատված <ՀՀՇՆ II-6.02-2006 <Սեյսմակալուն շինարարություն.Նախագծման նորմեր> շինարարական նորմերի 6.4.3-րդ կետի փոփոխությունը>:

16. ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 287-Ն որոշման համաձայն, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011 թվականի մարտի 18-ի N 32 հրամանով ստեղծված աշխատանքային խմբի գործունեության շրջանակներում, կազմակերվել և համակարգվել է ՀՀ աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված 2011 թվականին իրականացվող պետական աջակցության ծրագրերի շրջանակներում շահառուների ցուցակները ճշտելու համար բնակելի տների տեխնիկական վիճակի հետազննությունների իրականացման գործընթացը, կատարվել են շուրջ 340 բնակելի, այդ թվում 15 բազմաբնակարան շենքերի, տեխնիկական վիճակի հետազննություններ, որի արդյունքում տրված եզրակացությունների հիման վրա ճշտվել են շահառուների ցուցակները, շենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ տվյալները ներառվել են շենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ վարվող տվյալների բանկում:

17. ՀՀ վարչապետի, ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի հանձնարարականների կատարումն ապահովելու նպատակով հանրապետության մի շարք սողանքային տարածքներում կատարվել են ակնադիտական ուսումնասիրություններ, որոնց

արդյունքում առաջարկություններ են ներկայացվել բնակչության անվտանգությունն ապահովելու համար պահանջվող առաջնահերթ միջոցառումների վերաբերյալ:

5. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ և ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ

18. ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությունը, համաձայն <Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենքի, 2011 թվականի ընթացքում ՀՀ տարածքում իրականացրել է քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն՝ տեսչական, ընթացիկ և ըստ անհրաժեշտության ստուգումների միջոցով:

19. Տեսչական ստուգումների արդյունքում կազմվել են արձանագրություններ և քաղաքաշինական պետական տեսչության պետի կողմից կայացվել են համապատասխան որոշումներ, որոնցով առաջարկվել է մարզպետներին՝ հատուկ քննարկման առարկա դարձնել տեսչական ստուգումների արդյունքները և միջոցներ ձեռնարկել դրանց վերացման ու իրավախախտումներ թույլ տված պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Համայնքների ղեկավարներին տրվել են պարտադիր կատարման ցուցումներ:

20. Ընթացիկ և ըստ անհրաժեշտության ստուգումների արդյունքում, ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության տարածքային բաժինների կողմից քննվել է 1281 գործ, կազմվել են 833 արձանագրություններ և 448 տեղեկանքներ, որոնց հիման վրա տարածքային բաժինների պետերի կայացրած 833 որոշումները և 448 տեղեկանքները հաստատվել են ՀՀ քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչի կողմից: Հաստատված որոշումներով ՀՀ քաղաքաշինական պետական տեսչությունը 2011թ. ընթացքում իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ նշանակել է 49,250 մլն դրամ տուգանք, այդ թվում՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ 48.250 և 14 պաշտոնատար անձանց /համայնքների ղեկավարների/ նկատմամբ՝ 1,0 մլն դրամ: Տուգանքի չափը բյուջեով նախատեսվածի համեմատ /49,0 մլն դրամ/ կազմել է 101%: Մինչև 2011 թվականի դեկտեմբերի 20-ը ՀՀ պետբյուջե է մուտքագրել 45,0 մլն դրամ:

21. Քաղաքաշինական պետական տեսչությունում գործում է <Թեժ գիծ> հեռախոսահամար, որով քաղաքացիների կողմից ստացված 44 ահազանգի վերաբերյալ իրականացվել են ուսումնասիրություններ և տրվել գրավոր պատասխաններ և մասնագիտական եզրակացություններ:

22. 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ քաղաքաշինության բնագավառում գործում են 1738 կազմակերպություններ, որոնք ունեն թվով 2044 լիցենզիաներ և թվով 3869 ներդիրներ.

2011 թվականի ընթացքում, <Լիցենզավորման մասին> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանեցվել են /վերաձևակերպվել/ շինարարության, նախագծային և տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների թվով 1467 լիցենզիաներ, այդ թվում՝ շինարարության իրականացման **977** լիցենզիաներ՝ **2111** ներդիրներով, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության **358** լիցենզիաներ՝ **670** ներդիրներով և շինարարության որակի տեխնիկական հսկողության **132** լիցենզիաներ՝ **285** ներդիրներով:

2011 թվականի ընթացքում անց է կացվել 11 լիցենզավորման նիստ, որոնց արդյունքում տրամադրվել է **508** լիցենզիա:

ՀՀ պետական բյուջե մուտք է եղել **579.5** մլն դրամ լիցենզիաների տարեկան պետական տուրք՝ պլանավորված **359.7** մլն դրամ գումարի դիմաց:

ՀՀ վարչական դատարան են ներկայացվել 165 կազմակերպությունների լիցենզիաների գործողության դադարեցման հայցադիմումներ:

6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

23. Հաշվետու ժամանակաշրջանում նախարարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ ուղղված այլ երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, Իրանի Իսլամական Հանրապետության, Սիրիայի Արաբական Հանրապետության, Բուլղարիայի Հանրապետության, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների հետ տնտեսական համագործակցության զարգացմանն ու ընդլայնմանը, մասնավորապես՝

1) 2011 թվականի մայիսի 25-28-ը ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրակությունը ՀՀ քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանի գլխավորությամբ մասնակցել է Ղազախստանի Աստանա քաղաքում կայացած ԱՊՀ անդամ երկրների շինարարական գործունեության համագործակցության Միջկառավարական խորհրդի 31-րդ նիստին, որի ընթացքում ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից ներկայացվել է զեկույց՝ «Շինարարական արտադրանքի արժեքի հաշվարկի օպտիմալացման համար միասնական միջպետական համակարգի նորմատիվա-մեթոդական փաստաթղթերի համակարգի զարգացումը և կատարելագործումը» թեմայով:

2) 2011 թվականի նոյեմբերի 29-30-ը Երևանում կայացավ ԱՊՀ անդամ երկրների շինարարության բնագավառում համագործակցության Միջկառավարական Խորհրդի XXXII նիստը, որի ընթացքում ներկայացվեց մասնակից երկրների փորձը քաղաքաշինության ոլորտում, քննարկվեցին տարածական պլանավորմանը, նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը, բնակարանային քաղաքականությանը, շինարարությունում տեխնիկական կանոնակարգմանն ու նորմատիվային փաստաթղթերի դաշտի կատարելագործմանն առնչվող հարցեր: ՀՀ քաղաքաշինության նախարարությունը ներկայացրեց <Տեղական ինքնակառավարումը քաղաքների և գյուղական բնակավայրերի տարածական զարգացման համատեքստում> թեմայով ամփոփ զեկույց:

24. տնտեսական համագործակցության շրջանակներում ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության պատվիրակությունը 2011 թվականի դեկտեմբերի 7-9-ը մեկնել է Լեհաստան՝ երկու երկրների միջև երկկողմ համագործակցության ընդլայնման, տեղեկատվության և փորձի փոխանակման նպատակով: Հանդիպման ժամանակ քննարկվել են քաղաքաշինական ոլորտը կանոնակարգող օրենսդրությանը, վարչարարությանը, քաղաքաշինական գործունեության իրավական ընթացակարգերին վերաբերող հարցեր, ինչպես նաև քաղաքաշինական վերահսկողություն իրականացնող մարմինների կառուցվածքը և դրանց գործունեության կազմակերպման առանձնահատկությունները:

Հաշվետու ժամանակահատվածում նախարարություն է մուտքագրվել 12385 գրություն:

ՀՀ կառավարություն են ներկայացրել 156 որոշման նախագծեր, որից 87-ը դարձել են ՀՀ կառավարության, իսկ 25-ը՝ ՀՀ վարչապետի որոշումներ:

Տարվա ընթացքում ելք է արվել 6701 գրություն:

Նախարարությունում քննարկվել են քաղաքացիների թվով 878 դիմումներ, որից 537-ը՝ բնակարանային, 238-ը՝ շինարարական, 45-ը՝ աշխատանքային, 21-ը՝ ֆինանսական, 19-ը կենսաթոշակային, 9-ը՝ օրենսդրական և 5-ը՝ կոմունալ-կենցաղային բնույթի:

Ձև N 4
ՀՀ վարչապետի 24.09.2009թ.
N803-Ն որոշման հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ

2011 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները
1	2	3	4	5
	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	**56**.	«Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	2011 թվականի մարտի 24-ին ընդունվել է «Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայից բխող Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 308-Ն որոշումը /ավարտված է/: ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 17-ի նիստի N45 արձանագրային որոշման 16-րդ կետով հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթները» /ՀՀ կառավարության N2011 թվականի մարտի 24-ի N 308-Ն որոշման հավելվածի 1-ին կետ/: ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 308-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի կատարման շրջանակներում առաջարկվել է լրացումներ կատարել քաղաքացիական ծառայության վերապատրաստման դասընթացներում՝ լանդշաֆտային հիմնախնդիրների ներառման նպատակով /հաստատված ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հուլիսի 31-ի N 657-Ա որոշման

				մեջ փոփոխություն կատարելու մասին» N 952-Ա որոշմամբ: Առաջարկվել է նաև համապատասխան քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում լրացնել Կոնվենցիայի իմացության վերաբերյալ պահանջը: «Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 2011 թվականի դեկտեմբերի 19-ի N01/11.1/6409-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը /ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 308-Ն որոշման հավելվածի 3-րդ կետ/: Հայաստանի Հանրապետությունում Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի իրականացման վերաբերյալ 2011 թվականի զեկույցը տեղադրվել է նախարարության պաշտոնական կայքում /ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 308-Ն որոշման հավելվածի 8-րդ կետ /:
	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	**57.**	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախա-գիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Նախարարության 2011 թվականի մարտի 31-ի N 01/15.2/1254-11 գրությամբ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը /հաստատվել է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի N 678-Ն որոշմամբ /: Ավարտված է:
	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	**58.**	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարու-թյան որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության օբյեկտների կառուցապատման ընթացակարգերը կանոնակարգելու և մի շարք իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 257-Ն որոշման 9-րդ կետով կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման մեջ: Ավարտված է:
	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	**59.**	«Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) հանգստի, զբոսաշրջության և առողջարանային կենտրոնների կազմակերպման նպատակով առանձնացված տարածքներում քաղաքաշինական գործընթացների իրականացման կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավա-րության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային կենտրոններում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 13-ի N 111-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը նախարարության 2011 թվականի դեկտեմբերի 28-ի N 01/15.1/6610-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:

	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	**60.**	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրա ընդունմամբ պայմանավորված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը նախարարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 01/25.1/6352-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	***Պատասխանատու մարմինը***	***Ծրագրի կետը***	***Գերակա խնդիրները***	***Գերակա խնդիրների կատարմանն ուղղված քայլերը***
1	2	3	4	5
	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	**34.**	Բնակարանային ապահովում՝ աղետի գոտու բնակավայրերում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման միջոցով	Աղետի գոտու բնակավայրերում շարունակվել է երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պարտավորությունների կատարմանն ուղղված՝ դեռևս 2009 թվականին սկիզբ առած բնակարանային շինարարության ծրագիրը: Մասնավորապես. ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին ընթացք են ստացել 2431 բնակարանների (բնակելի տների) շինարարական աշխատանքները, որոնցից՝ - ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ-2» և «Անի» թաղամասերում 38 բազմաբնակարան շենքերի 1756 բնակարաններ: Ընդ որում, 38 բազմաբնակարան շենքերի շինարարական աշխատանքները հիմնականում ավարտված են, սակայն, հաշվի առնելով, որ անհրաժեշտություն է առաջացել իրականացնել նաև ներթաղամասային

				ջրամատակարարման, ջրահեռացման և գազաֆիկացման ցանցերի կառուցման, ինչպես նաև կառուցապատվող տարածքի բարեկարգման հետ կապված աշխատանքներ՝ նշված շենքերը նախատեսվում է շահագործման հանձնել 2012 թվականի մայիս ամսին: - ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում՝ 3 բազմաբնակարան շենքերի 104 բնակարաններ. - ՀՀ Լոռու մարզի 24 գյուղական համայնքներում՝ 571 բնակելի տների, որոնցից 168 բնակելի տների շինարարական աշխատանքներն արդեն իսկ ավարտված են: Հաշվի առնելով, որ բնակարանային շինարարության ծրագրի շահառու հանդիսացող Գյումրի քաղաքում հաշվառված 389 ընտանիքներ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 1329-Ն որոշմամբ սահմանված վերջնաժամկետում՝ 2011 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ, չեն ներկայացել և չեն ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը, ծրագրի շրջանակներում կառուցվող բնակարանների (բնակելի տների) բաշխումն ապահովելու նպատակով 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ ուսումնասիրվել են սահմանված կարգով հաշվառված 3434 ընտանիքների փաստաթղթային փաթեթները, որոնցից՝ Ուսումնասիրությունների արդյունքներով 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ՝ • ենթակա են համալրման անհրաժեշտ փաստաթղթերով 1414 փաթեթներ, *այդ թվում՝* - 1146-ը՝ Գյումրի քաղաքի, որոնցից 500 փաթեթներ՝ Երևան քաղաքի մասով ընտանիքների անդամների անվամբ անշարժ գույքի նկատմամբ գրանցված սեփականության իրավունքի գրանցման մասին կադաստրի կողմից տրամադրված ճշտված տեղեկատվությամբ. - 9-ը՝ ք.Սպիտակ. - 45-ը՝ գ.Ախուրյան. - 214-ը՝ ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրեր: • 2020-ը համալրված են անհրաժեշտ փաստաթղթերով և դրանց՝ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի տարվա ընթացքում կայացած 25 արտագնա նիստերում քննարկման արդյունքներով՝

				- 94 ընտանիքների (կամ համալրված փաթեթ ունեցող ընտանիքների 4.6%) բնակապահովման հարցը հետաձգվել է ավելի ուշ ժամկետների՝ հանրապետությունից ամբողջ կազմով բացակայելու պատճառով, *այդ թվում՝* ք.Գյումրի - 67, ք.Սպիտակ – 8, ք.Ստեփանավան – 2, գ.Ախուրյան – 8, ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրեր –9: - 331 ընտանիքներ (կամ համալրված փաթեթ ունեցող ընտանիքների 16.4%) չեն ճանաչվել ծրագրի շահառու՝ հիմնականում նախորդ տարիներին բնակարանային պայմանները բարելավելու կամ երկրաշարժի հետևանքով վնասված բնակելի տունը քանդված (քանդման ենթակա) չլինելու կամ երկրաշարժի պահին տուն ունենալու փաստը չհիմնավորելու հիմքերով կամ մահվան կապակցությամբ, *այդ թվում՝* ք.Գյումրի– 138 գ.Ախուրյան- 25 ք.Սպիտակ – 36 ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրեր – 132 - 1595 ընտանիքներ (կամ համալրված փաթեթ ունեցող ընտանիքների 79.0%) ճանաչվել են ծրագրի շահառու, *այդ թվում՝* ք. Գյումրի – 1218, որոնցից 4-սենյականոց բնակարան ստանալու հավակնող ճանաչված 109 ընտանիքներ մասնակցել են Մուշ թաղամասի 8 բազմաբնակարան շենքերի 4-սենյականոց 124 բնակարանների բաշխման նպատակով 2011 թվականի դեկտեմբերի 27-ին անցկացված վիճակահանությանը. ք.Սպիտակ–78, որոնցից 60-ը՝ 1-սենյականոց բնակարան ստանալու հավակնող ք.Ստեփանավան – 3 գ.Ախուրյան – 104 ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրեր – 192 Դրա հետ մեկտեղ շարունակվել է՝ - Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասում 2010 թվականին կառուցված բազմաբնակարան շենքերից բնակարան ստացած անձանց կողմից ժամանակավոր կացարանների ազատման և դրանց ապամոնտաժման գործընթացը ու 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ 575-ը քանդվել են.

				- Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասում 2010 թվականին իրականացված բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բազմաբնակարան շենքերից բնակարաններ ստացած ընտանիքների հետ հատկացված բնակարանների նվիրատվության (անհատույց մասնավորեցման) պայմանագրերի կնքման գործընթացը և 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ կնքվել են 624 պայմանագրեր: Միաժամանակ, աղետի գոտու բնակավայրերում բնակարանային շինարարության ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովելու, ինչպես նաև ծրագրի իրականացման ընթացքում ծագած խնդիրների կարգավորման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են՝ • ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված «Բնակարանային շինարարություն» ծախսային ծրագրի իրականացումն ապահովելու մասին» N 351-Ն որոշումը: Որոշման համաձայն ծրագրի կազմակերպչական աշխատանքների ֆինանսավորման համար հատկացված միջոցների հաշվին կարգավորվել են Գյումրի, Սպիտակ քաղաքներում, Ախուրյան շրջկենտրոնում, ինչպես նաև ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցվող բնակարանները (բնակելի տները) ստանալու հավակնող անձանց փաստաթղթային փաթեթների ուսումնասիրության և արդյունքում բնակարանների (բնակելի տների) հատկացման ու բաշխման գործընթացների հետ կապված հարցերը. • ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 287-Ն որոշումը, որն ուղղված է 2011 թվականին պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում ծրագրի շահառուների ցուցակները ճշտելու նպատակով

				երկրաշարժի հետևանքով վնասված բնակելի տների տեխնիկական վիճակի հետազննությունների իրականացման հետ կապված հարցերի կարգավորմանը: Որոշմամբ հատկացված 16,0 մլն. դրամ հատկացումների հաշվին իրականացվել է մոտ 360 բնակելի տների (որոնցից 15 բազմաբնակարան շենք) լրացուցիչ հետազննություն, որի արդյունքներով 100 բնակելի տուն գնահատվել է 2-րդ և 3-րդ աստիճանի վնասվածության, արդյունքում այդ ընտանիքները չեն ճանաչվել ծրագրի շահառու. • ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի N 1279-Ն որոշման մեջ լրացում, Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու ու Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 459-Ն որոշումը, որով կարգավորել է բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) ստացող ընտանիքների հետ նվիրատվության (անհատույց մասնավորեցման) պայմանագրերի նոտարական վավերացման և գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված վճարումների իրականացման հետ կապված հարցերը. • ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 408-Ն որոշումը, որով կարգավորել են Գյումրի քաղաքում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակարան ստացած բազմանդամ ընտանիքների կողմից զբաղեցրած տնակների՝ բնակությունից ազատման և քանդման հետ կապված հարցերը. • ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն և 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշումներում լրացումներ կատարելու մասին» N 1073-Ն որոշումը: Որոշմամբ կարգավորվել են ծրագրի իրականացման ընթացքում ի հայտ եկած բացասական դեպքերի կանխարգելման հետ կապված խնդիրները, մասնավորապես. կողմնակի միջամտության արդյունքում բնակելի տների տեխնիկական վիճակի վատթարացում, բնակելի տուն ստացող ընտանիքների կողմից կառուցապատողին անհրաժեշտ փաստաթղթեր

				չներկայացնելու պարագայում բնակելի տների շինարարական աշխատանքների իրականացմանը խոչընդոտում. • ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակարան ստանալուն հավակնող ընտանիքների կողմից անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելու մասին» N 1329-Ն որոշումը: Որոշման համաձայն ծրագրի շրջանակներում կառուցվող շենքերի նախագծերով նախատեսված բնակարանների բաշխման գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում և Ախուրյանի գյուղական համայնքում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակարան ստանալուն հավակնող ընտանիքների կողմից նրանց ընտանիքի անդամներին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերով համալրված փաթեթների ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2011 թվականի նոյեմբերի 1-ը: Բացի այդ, 2011 թվականին մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են 4 որոշումներ, որոնցով կարգավորվել են այլ սոցիալական խմբերում ընդգրկված ընտանիքների բնակարանային խնդիրները՝ 2010 թվականին կառուցված բնակարաններից (բնակելի տներից) չբաշխված բնակարանների (բնակելի տների) հատկացմամբ: Մասնավորապես. • ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանն իրավասություն վերապահելու մասին» N 235-Ն որոշումը: Որոշման համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում՝ սահմանված կարգով հաշվառված զոհված (մահացած) զինծառայողների (ազատամարտիկների) անօթևան ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով՝ «Բնակարանային շինարարություն» ծախսային ծրագրի շրջանակներում Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասում կառուցված բազմաբնակարան շենքերից ձեռք բերված բնակարաններից 8 բնակարանների բաշխման և հատկացման իրավասությունները վերապահվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը. • ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն իրավասություն վերապահելու մասին» N 341-Ն որոշումը: Որոշման համաձայն՝ առանց ծնողական խնամքի մնացած

				երեխաների թվին պատկանող հաշվառված անձանց բնակարանային խնդիրների լուծման նպատակով «Բնակարանային շինարարություն» ծախսային ծրագրի շրջանակներում Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասում կառուցված բազմաբնակարան շենքերից ձեռք բերված բնակարաններից մեկսենյականոց 6 բնակարանների բաշխման և հատկացման գործընթացի իրավասությունը վերապահվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը. • ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանն իրավասություն վերապահելու մասին» N 944 որոշումը, որի համաձայն ՀՀ Լոռու մարզի Սպիտակ և Ստեփանավան քաղաքներում թվով 9 3-սենյականոց բնակելի տներից (բնակարաններից)՝ - 7 բնակելի տուն (բնակարան)՝ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) անօթևան ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով, բնակելի տների (բնակարանների) հատկացման և բաշխման իրավասությունը վերապահել է ՀՀ պաշտպանության նախարարությանը. - 2 բնակելի տուն՝ հատկացվել է Սպիտակ քաղաքում մինչև երկրաշարժի հետևանքով ծնողներին կորցրած, սակայն սահմանված կարգով չհաշվառված անձանց. • ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1592-Ա որոշմամբ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում կառուցված բնակարաններից 1 բնակարան հատկացվել է քաղաքի բնակիչ, շարքային պայմանագրային զինծառայող, 2010 թվականին պարտադիր ժամկետային ծառայության ընթացքում ԼՂՀ հյուսիսարևելյան սահմանում մարտական հերթապահության ժամանակ ցուցաբերած արիության և նախաձեռնողականության համար ՀՀ Նախագահի կողմից՝ «Արիության» մեդալով և ԼՂՀ Նախագահի կողմից «Մարտական ծառայության» մեդալով պարգևատրված Արտակ Ղաբուզյանի ընտանիքին:
	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	**35.**	Քաղաքաշինության գործունեության հատուկ կարգավորման բնագավառի օրենսդրության կատարելագոր-ծում և ՀՀ բնակավայրերում քաղաքաշինական	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 728-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը նախարարության 09.11.2011թ. N 01/15.2/5220-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:

			գործունեության հատուկ կարգավորում	
	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	**36.**	ՀՀ տարածական պլանավորման համակարգի բարեփոխում, քաղաքաշինության ոլորտում համայնքների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	-2011 թվականի հունիսի 23-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-226, ՀՕ-227, ՀՕ-228, ՀՕ-229, ՀՕ-230, ՀՕ-231 օրենքները: - ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի մարտի 3-ին ընդունվել է «Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագիծը հաստատելու մասին» N 177-Ն որոշումը: - «ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» N1563-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկման է ներկայացվել 2011 թվականի դեկտեմբերի 28-ի N01/11.1/6557-11 գրությամբ: - ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 3-ի N 1471-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծը հաստատվել է կառավարության 31.03.2011թ. նիստում: Որոշմամբ հաստատված ժամանակացույցով՝ տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացի կազմակերպման խնդիրների մասով անց են կացվել սեմինարներ ՀՀ Արագածոտնի, Տավուշի, Լոռու, Շիրակի,Արարատի և Արմավիրի մարզերում: - ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի «ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը և գործունեության

				կարգը հաստատելու մասին» N 1064-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի նիստերով քննարկվել են Արարատի մարզի Մասիս քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի մշակման /լրամշակման/, ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր,Նոր Գեղի, ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք, Վայոց Ձորի մարզի Ազատեկ,Գլաձոր, Ելփին գյուղական համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի, և ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Գ-1, Գ-Կենտրոն, Գ-2 և Գ-3 թաղամասերին հարող հողերի 4.1 հա հատվածի, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի կամրջին հարող 5.6հա տարածքի գոտիավորման նախագծերի մշակման առաջադրանքները, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատագծի նախագիծը, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1597-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը: -- ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից համակարգվում են համայնքների պատվերով իրականացվող «Սևան» ազգային պարկին հարող համայնքների գլխավոր հատակագծերի մշակման աշխատանքները: Մշակման ընթացքում են Սևան ազգային պարկին հարող թվով 18 համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերը, որոնցից նախարարության համաձայնեցմանն են ներկայացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Բերդկունք, Շորժա, Նորատուս, Գեղարքունիք, Հայրավանք, Կարմիրգյուղ, Վարդենիկ, վաղաշեն, Ջիլ համայնքների պարզեցված գլխավոր հատակագիծը: - ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 603-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Աղբերք գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը: - նախարարության համաձայնեցմանն են ներկայացվել նաև ՀՀ Կոտայքի մարզի Զառ, Կապուտան, Ձորաղբյուր, Քանաքեռավան և ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերը: - Մշակվել և 2011 թվականի դեկտեմբերի 28-ի N 01/11.1/6558-11 գրությամբ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը:

				- Մշակվել և 2011 թվականի դեկտեմբերի 27-ի N 01/11.1/6550-11 գրությամբ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը:
	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	**37.**	ՀՀ տարածքում ինքնակամ շինարարության հիմնախնդիրների լուծման միջոցառումների իրագործում	- Վերահսկող կազմակերպություններին ֆինանսական խրախուսման միջոցների և մեխանիզմների կիրառումն ապահովելու նպատակով, 2011 թվականի մարտի 23-ի N 01/25.1/1087-11 գրությամբ, պետական վերահսկողության իրականացման արդյունավետության բարձրացման և ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով համապատասխան առաջարկություններ է ներկայացվել տեսչական բարեփոխումները համակարգող խորհրդին: - Մշակվել է «Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրա ընդունմամբ պայմանավորված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ինչպես նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը և 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 01/25.1/6352-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն: - Համայնքներում ինքնակամ շինարարության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով համապատասխան կառույցների ստեղծման վերաբերյալ, 2011 թվականի մայիսի 17-ի N 01/25.1/2112-11 գրությամբ, ՀՀ վարչապետի հանձնարարականի նախագիծ է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն: - «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի լրամշակված փաթեթը 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 01/25.1/6207-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:

	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	**38.**	Քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կանոնակարգում	- «Հայաստանի Հանրապետության համայնքներում քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կանոնակարգման հայեցակարգին և համակարգի ներդրման ուղղություններից բխող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը 19.09.2011թ. N 01/15.1/4566-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը և հաստատվել ՀՀ կառավարության 03.11.2011թ. N 43 արձանագրային որոշմամբ: - «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 3-ի նիստի N 43 արձանագրային որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի փաթեթը 28.12.2011թ. N 01/15.1/6604-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: - Ի կատարումն ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 3-ի N24.6/[90883]-11 հանձնարարականի (հավելված 2, կետ 1) «Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) բնակելի կառուցապատման օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգների ներդրման ու կիրառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1136-Ն ու 2010 թվականի ապրիլի 15-ի N 440-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը 29.12.2011թ. N 01/15.1/6639-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:
	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	**39.**	Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing Business) վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի էական բարելավում	ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի մարտի 3-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության շինարարության օբյեկտների կառուցապատման ընթացակարգերը կանոնակարգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 257-Ն որոշումը: Նույն որոշմամբ վերանայվել են ՀՀ կառավարության 29.08.2002թ. N 1473-Ն, 21.12.1998թ. N 812, 06.05.2010թ. N 711-Ն, 28.10.98թ. N 660, 02.02.2002թ. N 91, 08.05.03թ. N 626-Ն որոշումներով սահմանված նորմերը, ինչի շնորհիվ էապես նվազեցվել է կառուցապատման ընթացակարգերի թիվը, տևողությունն ու արժեքը: - Քաղաքաշինության ոլորտում գործարար միջավայրի բարելավման, կառուցապատման ընթացակարգերի պարզեցման, ժամկետների կրճատման, ՀԲ-ի «Գործարարությամբ զբաղվելը» Հայաստանի Հանրապետության վարկանիշային ցուցանիշի բարելավման նպատակով

				ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի մարտի 3-ին ընդունված N 257-Ն որոշման պահանջների կատարման շրջանակներում մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 22-ի N 130-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ամփոփ փաթեթը 2011թ. հունիսի 24-ի N 01/11.1/2995-11 գրությամբ ներկայացվել է պետական իրավական փորձաքննության: - ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 1768-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի» 4.5 կետի կատարման շրջանակներում ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից մշակվել է «Կառուցապատողի ուղեցույց» ձեռնարկը, որի էլեկտրոնային տարբերակը տեղադրվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության, Երևանի քաղաքապետարանի և մարպետարանների էլեկտրոնային կայքերում, իսկ ուղեցույցի համառոտ տարբերակը տպագրվել և ավելի քան 320 օրինակ տրամադրվել է շահագրգիռ գերատեսչություններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին: 2011 թվականին կատարված բարեփոխումների արդյունքում Հայաստանը բարելավել է իր վարկանիշային ցուցանիշը 2012 թվականի “Գործարարությամբ զբաղվելը” գնահատման սանդղակում 38 տեղով, շինարարական թույլտվություններ բաղադրիչով՝ 183 երկրների շարքում զբաղեցնելով 57-րդ հորիզոնականը: - 2011 թվականի մայիսի 20-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N 679-Ն որոշումը, որը նույնպես նպատակաուղղված է կառուցապատման ընթացակարգերի կրճատմանը: - ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշման մեջ լրացում կատարելու մասին» N889-Ն որոշումը :